

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Արմավիրի մարզի Գայ գյուղական համայնքի ղեկավարի 2012 թ.-ի 1-ի կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

Հարգելի համագյուղացիներ, համայնքի ավագանու հարգարժան անդամներ, հյուրեր: Այսօր ցանկանում եմ ձեր ուշադրությանը և քննարկմանը ներկայացնել հաշվետվություն՝ համայնքի ղեկավարի և ավագանու կողմից 2012 թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

1. Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում.

Կատարվել է համայնքի տնտեսությունների գրքերի ուղղում և համայնքի բնակիչների հաշվառում: Բնակչության ընդհանուր թիվը կազմում է 3456 մարդ, որից 387 եզդիներ:

Հաշվետու կիսամյակում համայնքում գրանցվել է 20 ծնունդ և 16 մահ:

Գումարվել է ավագանու 7 նիստ, իրականացվել է քաղաքացիների ընդունելություն, քննության է առնվել 70 դիմում, որոնց տրվել է համապատասխան ընթացք:

Մուտք է արվել 100 գրություն, որոնք քննարկվել են, տրվել է ընթացք և պատասխանը ուղարկվել հասցեատերերին:

Համայնքի հիմնախնդիրների լուծման համար տարբեր ուժային կառույցներից գրվել է 80 գրություն:

2. Ֆինանսների բնագավառում.

Կազմվել և ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի բյուջեի նախագիծը, ավագանու որոշումներով բյուջեում կատարվել են փոփոխություններ:

Կազմակերպվում և գանձվում են գույքահարկը և հողի հարկը:

Հողի հարկը՝ 10350.0 հազար դրամի տարեկան ծրագրի դրսաց գասսպսւ է մոտ 1533.5 հազար դրամ, կամ կատարվել է 14.82%:

Գույքահարկը՝ 9815.8 հազար դրամի տարեկան ծրագրի դիմաց գանձվել է 663.3 հազար դրամ, կամ կատարվել է 6.7%:

3. Հասարակական կարգի պահպանության բնագավառում.

Ոստիկանության տեղամասային տեսուչի աջակցությամբ աշխատանքներ են տարվում և համայնքում իրավախախտման դեպքեր չկան:

4. Պաշտպանության բնագավառում.

Աջակցություն է ցուցաբերվել զինակոչին, պարտադիր զինվորական ծառայությունից վերադարձածները պահանջվող կարգի համաձայն վերցվել են հաշվառման:

Աջակցել ենք զինվորական հաշվառումից և զորակոչից խուսափողների որոնման, հայտնաբերման աշխատանքներին:

Դրամական սոց. օգնություն է ցուցաբերվել Հայրենական Սեօ պատերազմի վետերաններին, Արցախյան ազատամարտում զոհվածների ընտանիքներին և վիրավոր ազատամարտիկներին:

Հաղթանակի օրվա կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում, կատարվել է ավտոդպրոցում սովորող զինակոչիկների ճանապարհածախսի փոխհատուցում:

5. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում

Կառուցապատողներին սահմանված կարգով տրվել է շինարարության թույլտվություն, արգելվել է ապօրինի շինարարությունը: Կատարվում են փողոցների բարելավման աշխատանքներ, վերանորոգվում է Գայի միջհամայնքային ուղիների մի մասը:

6. Հող օգտագործման բնագավառում.

Հողային հաշվեկշիռը կազմելու համար կատարվել է հողերի ընթացիկ հաշվառում և ներկայացվել կադաստրի տարածքային ստորաբաժանում:

Իրականացվել են համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի աճուրդ վաճառք և վարձակալության տրամադրում:

Կատարվել է ցանքի ընթացիկ հաշվառում և ներկայացվել է տարածքային վիճակագրական վարչություն:

Համայնքում ապօրինի հողօգտագործողներ չկան: Տարվում են աշխատանքներ հողերի կատեգորիաների ճշտման ուղղությամբ:

7. Տրանսպորտի բնագավառում

Տեղադրվել են ավտոկանգառների տաղավարներ և արտաքին լուսավորության հենասյուներ:

8. Առևտրի և սպասարկման բնագավառում.

Համայնքում գործում են 7 խառն ապրանքների վաճառքի խանութներ, 1 սուպերմարկետ, 2 դեղատուն, 1 թունաքիմկատների խանութ:

Հաճախակի ստուգումներ է անցկացվում առևտրի օբյեկտներում և խախտման դեպքեր չեն արձանագրվել:

9. Կրթության և մշակույթի բնագավառում.

Համայնքը ունի բարեկարգ դպրոց, որտեղ ընդգրկված են 514 աշակերտներ և 45 աշխատողներ: Գյուղապետարանը դպրոցում անցկացվող միջոցառումներին իր մասնակցությունն ու աջակցությունն է ցուցաբերում: Գյուղապետարանի աջակցությամբ գործում է նախակրթարան՝ երկու դասարանով:

Գյուղն ունի նախադպրոցական տարիքի 266 երեխաներ, սակայն չունի մանկապարտեզ, որը խիստ անհրաժեշտություն է:

Մշակույթի տունը վթարային վիճակում էր, այս տարի հիմնովին վերակառուցվել է մշակույթի տան տանիքը:

Եվ մանկապարտեզի շենքի կառուցումը, և մշակույթի տան հիմնավերանորոգումը հնարավոր չէ իրականացնել համայնքի բյուջեի հաշվին:

Համայնքում գործում է «Արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ը, որը ևս ունի վերանորոգման կարիք:

Համայնքի գրադարանից օգտվում են համայնքի շուրջ 320 ընթերցող:

Համայնքը աջակցություն է ցուցաբերում նաև համայնքում գործող Սուրբ Նշան եկեղեցուն:

Համայնքում առկա հիմնախնդիրները՝

1. Մշակույթի տան վերանորոգումը
2. մանկապարտեզի շենքի կառուցում
3. հողերի կարգերի ճշտում
4. Գայ համայնքը էջմիածին քաղաքին և մարզկենտրոնին կապող ճանապարհի 487 մ-ի ասֆալտապատում:

Համայնքում առկա այս հիմնախնդիրները հնարավոր չէ իրականացնել միայն գյուղապետարանի բյուջեի հաշվին:

Հուսով եմք, որ ՀՀ կառավարությունը և Արմավիրի մարզպետարանը կաջակցեն մեզ այս հարցում:

Գայի գյուղական համայնքի ղեկավարի ժ/պ՝



Խ. Քոչարյան